

Հավելված 1


Հայաստանի Հանրապետության  
վիճակագրության պետական խորհրդի  
2020 թվականի փետրվարի 27-ի թիվ 10-Ա որոշման

**Հայաստան. Կլիմայի փոփոխության վիճակագրության  
զարգացման ճանապարհային քարտեզ**

ԵՐԵՎԱՆ  
2020

# Նախաբան

Կլիմայի փոփոխության վիճակագրության զարգացման սույն ճանապարհային քարտեզը մշակվել է ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի վիճակագրական ստորաբաժանման օժանդակությամբ, որի համար հայտնում ենք մեր երախտագիտությունը: Սա Հայաստանում իրականացված առաջին աշխատանքն է, որտեղ փորձ է արվել գնահատելու կլիմայի փոփոխության վիճակագրության ազգային համակարգի ներկա վիճակը, նրա բարելավման առաջնահերթություններն ու գործողությունները:



# Հապավումներ

|                  |   |
|------------------|---|
| ԿՓ               | Կլիմայի փոփոխություն  |
| ԵՎՀ              | Եվրոպական վիճակագիրների համաժողով (ՄԱԿ ԵՏՀ)   |
| ԵՄ               | Եվրոպական միություն   |
| ԱՏՀ              | Աշխարհագրական տեղեկատվական համակարգ   |
| ԳԷՀ              | Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ  |
| ՋԳ               | Ջերմոցային գազեր  |
| ՀՆԱ              | Համախառն ներքին արդյունք  |
| ԱՊԱՕ             | Արդյունաբերական պրոցեսներ և արտադրանքի օգտագործում  |
| ԳԱՏԱՀ            | Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և այլ հողօգտագործում   |
| ԿՓՓՄԽ            | Կլիմայի փոփոխության միջկառավարական փորձագետների խումբ   |
| ԲԼՏՄ             | Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին   |
| ԷՆ               | Էկոնոմիկայի նախարարություն  |
| ՇՄՆ              | Շրջակա միջավայրի նախարարություն   |
| ԿԳՄՄ             | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն   |
| ՈՄՅՕՄ            | Ոչ մեթանային ցնդող օրգանական միացություններ   |
| PRECIS           | Ջերմաստիճանի և տեղումների կանխատեսումների համար տարածաշրջանային կլիմայական մոդել (Մեծ Բրիտանիայի օդերևութաբանության գործակալության տարածաշրջանային կլիմայական մոդել ) |
| ՀՀ               | Հայաստանի Հանրապետություն   |
| ԲՏՀՀ             | Բնապահպանական-տնտեսական հաշիվների համակարգ  |
| ՎԿ               | Վիճակագրական կոմիտե   |
| ՎՊԽ              | Վիճակագրության պետական խորհուրդ   |
| ՄԱԿ              | Միավորված ազգերի կազմակերպություն   |
| ԵՏՀ              | Եվրոպայի տնտեսական հանձնաժողով  |
| ՄԱԶԾ             | Միավորված ազգերի զարգացման ծրագիր   |
| ԿՓՇԿ             | Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիա   |
| ԱՎԳ              | Ազգային վիճակագրական գրասենյակ  |
| ՏԿԵՆ             | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն   |
| CH <sub>4</sub>  | Մեթան   |
| CO               | Ածխածնի մոնօքսիդ  |
| CO <sub>2</sub>  | Ածխածնի երկօքսիդ  |
| NO <sub>x</sub>  | Ազոտի օքսիդներ  |
| N <sub>2</sub> O | Ազոտի օքսիդ   |
| SO <sub>2</sub>  | Ծծմբի երկօքսիդ  |

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|   |    |
|---|----|
| 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....  | 5  |
| 1.1 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....  | 6  |
| 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ .....  | 9  |
| 2.2 ՎՏԱՆԳԱՎՈՐ ՕՐԵՐԿՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԿՈՒՅԹՆԵՐԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ .....   | 11 |
| 2.3 ԷԿՈԼՈԳԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....   | 12 |
| 3. ԶԵՐՄՈՑԱՅԻՆ ԳԱԶԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԱԴԱՍՏՐՆԵՐ .....   | 13 |
| 3.1. ԿԱԴԱՍՏՐԻ ՁԱՎՈՐՈՒՄԸ. ԱՆՑԱԾ և ՆԵՐԿԱ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ .....   | 13 |
| 3.2. ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ .....   | 16 |
| 4. ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԸ .....  | 18 |
| ՀԱՎԵԼՎԱԾ 1 – ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ .....   | 43 |
| ՀԱՎԵԼՎԱԾ 2 – ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ և ՍԽԵՄԱՆԵՐ .....   | 45 |
| ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ<br>ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՄԱԿ ԵՏՉ EXCEL ԳՈՐԾԻՔԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ..... | 46 |

# 1. Ներածություն

Հայաստանի Հանրապետությունը դեպի ծով ելք չունեցող երկիր է՝ զարգացող տնտեսությամբ: Իր համեմատաբար փոքր տնտեսության շնորհիվ աննշան է ազդեցությունը կլիմայի փոփոխության գլոբալ պրոցեսների վրա:

Հայաստանի Հանրապետությունը, ընդգրկված չլինելով ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի (ԿՓՇԿ) I Հավելվածում, չունի ջերմոցային գազերի արտանետումների քանակական կրճատման պարտավորություններ, ինչն էլ երկիրը հաստատել է իր դիրքորոշումը ՋԳ արտանետումների սահմանափակման հարցում իր «Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողությունները/ներդրումները» Փարիզի համաձայնագրի ներքո (Փարիզի համաձայնագրի վավերացումը կատարվել է Ազգային ժողովի կողմից 2017թ. փետրվարի 8-ին)<sup>1</sup>:

Որպես ՄԱԿ ԿՓՇԿ կողմ երկիր՝ Հայաստանը ներկայացրել է կլիմայի փոփոխության վերաբերյալ իր տեղեկատվությունը, ներառյալ ՋԳ գույքագրումները՝ սկսած 1998թ. առաջին ազգային հաղորդագրությունից:

Այնուամենայնիվ, միայն վերջերս Վիճակագրական կոմիտեն իր հրապարակումներում սկսեց ներառել էներգետիկ հաշվեկշռի և ՋԳ գույքագրման տվյալները: Այս առաջին ճանապարհային քարտեզի հիմնական նպատակն է գնահատել Հայաստանում կլիմայի փոփոխության վիճակագրության վիճակը և դրա թափանցիկ հաշվետվողականությունը՝ որպես կանոնավոր վիճակագրական տվյալների մի մաս և սահմանել դրա հետագա զարգացման ուղիները: Ճանապարհային քարտեզը մշակվել է ՄԱԿ-ի ԵՏՀ վիճակագրական ստորաբաժանման փորձագետների մեթոդաբանական աջակցությամբ:

Ճանապարհային քարտեզի մշակման աշխատանքներն իրականացվել են հետևյալ սխեմայով.

- միջոցառումների առաջնահերթությունների սահմանում,
- ոլորտային գործողությունների սահմանում,
- վարչական ռեգիստրների բարելավման հասցեական միջոցառումներ,
- միջոցառումների իրականացման գործիքակազմի և մեխանիզմների մշակում և ներդրում,
- աշխատանքների իրականացման մշտադիտարկում, արդյունքների գնահատում,
- տեղեկատվության որակի, թափանցիկության, մատչելիության և անընդհատ հոսքերի ապահովում:

Ճանապարհային քարտեզի մշակման աշխատանքներն իրականացրել է պարոն Յուրիկ Պողոսյանի ղեկավարած ազգային փորձագետների խումբը<sup>2</sup>:

Աշխատանքային խումբն իր երախտագիտությունն է հայտնում կլիմայի փոփոխության վիճակագրության վերաբերյալ ՄԱԿ-ի ԵՏՀ ղեկավար խմբի անդամ պարոն Ռոբ Սմիթին

<sup>1</sup> Տե՛ս <http://www.mnp.am/en/pages/148> and <http://www.nature-ic.am/en/publication/GHG-National-Inventory-Report-of-the-Republic-of-Armenia-for-2012/7281>

<sup>2</sup> Աշխատանքների իրականացման ընթացքում պարոն Յու.Պողոսյանը եղել է ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի անդամ: Ներկայումս նա ՇՄԵԳ «Շրջակա միջավայրի տեղեկատվական միասնական համակարգ - Արևելք» (ENI SEIS II East) ծրագրի Հայաստանի ազգային օգնականն է:

մասնագիտական խորհրդատվության և աշխատանքի իրականացման ընթացքում գործնական օժանդակության համար<sup>1</sup>:

Աշխատանքային խմբին հաջողվել է ի մի բերել վիճակագրության դաշտում առկա անորոշություններն ու բացերը և առաջարկել լուծումներ: Բավարար աջակցության և հնարավորությունների պարագայում հնարավոր կլինի մշակել առավել մանրամասնեցված ճանապարհային քարտեզներ տարբեր շահառուների համար:

Ճանապարհային քարտեզի հետագա տարբերակներում կլիմայի փոփոխության հետ կապված վիճակագրության գերակայություններն ու գործողությունները կվերանայվեն և կմանրամասնեցվեն:

Աշխատանքում օգտագործված տեղեկատվության աղբյուրը Վիճակագրական կոմիտեն է, եթե այլ նշումներ չկան:

## 1.1 Հայաստանի ընդհանուր նկարագիրը

Հայաստանի Հանրապետությունը դեպի ծով ելք չունեցող զարգացող երկիր է՝ տեղակայված Հայկական լեռնաշխարհի արևելյան հատվածում: Այն լեռնային երկիր է ծովի մակարդակից 1 800 մ միջին բարձրության վրա, ամենաբարձր կետը՝ 4 090 մ (Արագած լեռ), ամենացածրը՝ 375 մ (Դեբեդ գետի հովիտ): Երկրի տարածքը կազմում է 29 743 քառակուսի կիլոմետր, 90% գտնվում է ծովի մակարդակից 1 000 մ և ավել բարձրության վրա:

Հայաստանը բարձր սեյսմիկ ակտիվության երկիր է, որտեղ գրանցվել են տարբեր մագնիտուդ հզորության երկրաշարժեր: Վերջին խոշոր ավերիչ երկրաշարժը 1988թ. Ռիխտերի սանդղակով մոտ 10 բալ ուժգնությամբ, ավերեց ենթակառուցվածքներն ու տնտեսությունը և հանգեցրեց ավելի քան 25 000 մարդու մահվան: 2011թ. գրանցվել է երկրաշարժերի 222 դեպք, 2015թ.՝ 82, իսկ 2018թ.՝ 47:

Վերջին տարիների ընթացքում աճել է կլիմայական ամբարենպաստ պայմանների հետ կապված արտակարգ իրավիճակների քանակը՝ անտառային հրդեհներ, կարկուտ, սառնամանիք, ուժեղ քամիներ և ջրհեղեղներ:

Հայաստանի կլիման տատանվում է արևադարձայինից մինչև բարձր լեռնային: Օդի միջին տարեկան ջերմաստիճանը 5.5°C է:

Հայաստանը հարուստ է ոչ էներգետիկ հանքանյութերով, այդ թվում, շինարարական, դեկորատիվ և կիսաթանկարժեք քարերի, գունավոր, թանկարժեք և հազվագյուտ մետաղների պաշարներով: Երկիրը չունի բնական էներգակիրների էական պաշարներ և պահանջները բավարարելու համար հենվում է Ռուսաստանից (ավելի քան 84%) և Իրանից ներկրվող վառելիքի վրա:

Ըստ 2018թ. ՀՀ հողային հաշվեկշռի, գյուղատնտեսական նշանակության հողերը կազմել են երկրի ընդհանուր տարածքի 68.7%-ը, անտառածածկ տարածքները՝ մոտ 10%-ը, իսկ հատուկ պահպանվող տարածքները՝ ավելի քան 11%-ը:

<sup>1</sup> Պարոն Համլետ Մելքոնյանը Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն ՊՈԱԿ-ից (Հայպետհիդրոմետ) եղել է Գլուխ 2-ի մշակման պատասխանատուն, Ջերմոցային գազերի արտանետումների կադաստրի նախկին պատասխանատու պարոն Մարտիրոս Օառուկյանը մշակել է 3-րդ գլխում ներկայացված Հայաստանում արտանետումների կադաստրի վարման պատմությունը: Վիճակագրական կոմիտեից տիկին Անահիտ Մաֆյանը և տիկին Անի Համբարձումյանը մասնակցել են Գլուխ 4-ի գործողությունների մշակմանը:

Հայաստանի միջին բազմատարյա վերականգնվող ջրային ռեսուրսները կազմում են մոտ 7 մլրդ. խոր. մ: Ստորերկրյա ջրերի պաշարները մոտ 4 մլրդ. խոր. մ են: 2018թ. համար վերականգնվող ջրային ռեսուրսները կազմել են 6 571 մլն. խոր. մ, ջրառը՝ 2 715 մլն. խոր. մ (1 523 մլն. խոր. մ մակերևութային աղբյուրներից և ևս 1 192 մլն. խոր.մ ստորերկրյա աղբյուրներից), ջրային ռեսուրսների շահագործման ցուցանիշը կազմում է 41.3%:

Հայաստանի ամենախոշոր լիճը Սևանա լիճն է, որը տարածաշրջանի և աշխարհի խոշորագույն լեռնային քաղցրահամ լճերից է: Պատմականորեն լճի ջրի միջին մակարդակը եղել է ծովի մակարդակից 1 916 մետր բարձրության վրա, ծավալը՝ 55.8 մլրդ. խոր. մ, ջրի հայելու մակերեսը՝ 1 416 քառ. կմ, առավելագույն խորությունը՝ 99 մ: Երկրի էլեկտրաէներգիայի անընդհատ աճող պահանջների (մասնավորապես քիմիական և գունավոր մետալուրգիայի պահանջների) բավարարման նպատակով սկսած 1930-ական թվականներից Սևան-Հրազդան հիդրոկայանի կասկադի շահագործման, ինչպես նաև Արարատյան դաշտի ոռոգման համար Սևանա լճի անկայուն ջրօգտագործման հետևանքով նրա մակարդակը նվազել է ավելի քան 19 մետրով իր պատմական մակարդակից՝ ճգնաժամի պատճառ դառնալով լճի էկոհամակարգի համար, մասնավորապես, պատճառ դառնալով լճի ջրերի ծաղկման (էֆտրոֆիկացման) վտանգին:

1980-ական թվականներից ի վեր, իրավիճակի բարելավման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների արդյունքում (Արփա-Սևան ջրատարով Արփա գետի ջրերի տեղափոխումը Սևանա լիճ, լճի ջրերի բացթողումների խիստ կանոնակարգում) 2018թ. տարեվերջին Սևանա լճի մակարդակը բարձրացել և հասել է ծովի մակարդակից 1 900.4 մ բարձրության, մակերեսը կազմել է 1 277.5 քառ. կմ, ծավալը՝ 38.0 մլրդ. խոր. մ, առավելագույն խորությունը՝ 83.5 մ: Լճի էկոլոգիական վիճակի հետագա բարելավումը երկրի գերակայություններից է:

2018թ. Հայաստանի մշտական բնակչությունը կազմել է շուրջ 3 մլն., որից 2/3-ը՝ քաղաքային բնակչությունն է: Ամենախոշոր քաղաքը մայրաքաղաք Երևանն է, որտեղ բնակվում է երկրի բնակչության ավելի քան մեկ երրորդը և քաղաքային բնակչության 57.0%-ը: Բնակչության բնական աճի գործակիցը 1 000 բնակչի հաշվով կազմել է 3.7 և ունի նվազման միտումներ: Երկրի հարթավայրերում բնակչության խտությունը կազմում է մեկ քառակուսի կիլոմետրի վրա ավելի քան 680 մարդ՝ համեմատած լեռնային գոտիներում մեկ քառ. կմ-ի վրա 23-ի հետ: Բնակչության գրագիտության մակարդակը 99.8% է: 25 և բարձր տարիքի քաղաքացիների մեկ երրորդը միջին և բարձրագույն մասնագիտական կրթություն ունի:

Ընդհանուր աշխատուժը 1.14 մլն. է, միջին տարեկան զբաղվածությունը՝ 903.0 հազ. մարդ, 237 հազ. մարդ կամ աշխատուժի 20.8%-ը գործազուրկ է: Աղքատության մակարդակը կազմում է մոտ 26%:

2018թ. տնտեսության մեջ առևտրի և ծառայությունների ոլորտների մասնաբաժինը կազմել է ՀՆԱ-ի 50.7%-ը: ՀՆԱ-ում արտադրության և էներգետիկ մասնաբաժինը կազմել է 18.4%, գյուղատնտեսությունը, անտառտնտեսությունը, ձկնորսությունը՝ 13.7%, շինարարությունը՝ 6.6%, արտադրանքի հարկերը (հանած սուբսիդիաները)՝ 10.6%:

2016թ. էներգահնտենսիվությունը կազմել է 310 կգ նավթային համարժեքով ՀՆԱ-ի 1 000 ԱՄՆ դոլարի դիմաց (2011թ. հաստատուն գներով), CO<sub>2</sub> համ. արտանետումները կազմել են 123 կգ ՀՆԱ-ի 1 000 ԱՄՆ դոլարի դիմաց:

Մաքուր վառելիքային տեխնոլոգիաներից հիմնական կախվածությամբ տնային տնտեսությունների մասնաբաժինը կազմել է 57.1%:

Հայաստանում էներգիայի հիմնական աղբյուրներն են ամբողջությամբ ներկրվող բնական գազը և տրանսպորտի հեղուկ վառելիքը: ՋԳ արտանետումների ազգային կադաստրի համաձայն, 2016թ. դրությամբ առաջնային էներգիայի մոտ 61%-ը, հանածո վառելիքի սպառման 84.2%-ը և հանածո վառելիքի այրումից առաջացող CO<sub>2</sub> արտանետումների մոտ 83%-ը բաժին է ընկել բնական գազին: Դա բացատրվում է հանրապետությունում գազաֆիկացման բարձր մակարդակով՝ 95% և բնական գազի լայնածավալ օգտագործմամբ ջեռուցման և այլ կենցաղային նպատակներով: Ամենախոշոր էներգիայի սպառողներն են տնային տնտեսությունները (38%), ավտոմոբիլային տրանսպորտը (29%), առևտուրը և ծառայությունները (17%), արդյունաբերությունը (14%): Ավտոմեքենաների մեծ մասը բնական գազն օգտագործում է որպես շարժիչային վառելիք:

Էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքը 2018թ. ունեցել է հետևյալ տեսքը. արտադրվել է 7 776.9 մլն. կվտ/ժամ էլեկտրաէներգիա, որի 43.4%-ն արտադրվել է բնական գազի հզորությամբ աշխատող ջերմային կայաններում, 26.7%-ը՝ ատոմակայանում, 29.8%-ը՝ ՀԷԿ-երում և 0.1%-ն այլ վերականգնվող աղբյուրներից է:



## 2. Հայաստանի կլիմայի փոփոխության նկարագիրը

Հայաստանը լեռնային երկիր է, որի բարձրությունները փոփոխվում են 375-4 090 մ ծովի մակարդակից: Հանրապետության տարածքում առկա են կլիմայական 6 գոտիներ՝ չոր մերձարևադարձային, կիսաանապատային, տափաստանային, անտառային, ալպյան և ցուրտ բարձր լեռնային:

Հայաստանի բազմատարյա միջին ջերմաստիճանը կազմել է 5.5°C: Արձանագրված բացարձակ նվազագույն ջերմաստիճանը -42°C (1961թ.) է, իսկ բացարձակ առավելագույնը՝ +43.7°C (2011թ.): Բարձր լեռնային շրջաններում միջին ջերմաստիճանը հունիս-օգոստոս ամիսներին 10°C է, հարթավայրերում՝ 24-26°C: Հունվար ամսվա օդի միջին ջերմաստիճանը կախված է տեղանքի բարձրությունից և տատանվում է -13°C-ից մինչև +1°C: Հունվարը ձմռան ամենացուրտ ամիսն է, որի միջին ջերմաստիճանը կազմում է -6.7°C: Հանրապետության հյուսիս-արևելյան և հարավ-արևելյան շրջաններում ձմեռը բարեխառն է: Իսկ հյուսիս-արևմտյան շրջաններն աչքի են ընկնում ցրտաշունչ ձմեռներով:

Կլիման Հայաստանում բավական չոր է, տարեկան տեղումների միջին քանակը կազմում է 592 մմ: Առավելագույն տեղումները դիտվում են բարձր լեռնային խոնավ շրջաններում՝ 800-1100 մմ: Տեղումնառատ ժամանակաշրջանն է ապրիլ-մայիսը: Ամռանը տեղումները հարթավայրերում սակավ են (32-36 մմ):

Քամու միջին տարեկան արագությունը հանրապետության տարածքում նույնպես բաշխված է անհամաչափ՝ 1.0 մ/վրկ մինչև 8.0 մ/վրկ: Հայաստանի որոշ շրջաններում կարող է հասնել 20 մ/վրկ և ավելի:

Հայկական լեռնաշխարհն արևշատ է, արևափայլի միջին տարեկան տևողությունը տատանվում է 1 600-2 800 ժամի սահմաններում: Առավելագույն անարև օրերի թիվը դիտվում է ձմռան ամիսներին և կազմում է 9-12 օր: Գումարային ճառագայթման մեծությունը Հայաստանի տարածքում տատանվում է 120-160 կկալ/սմ<sup>2</sup> սահմաններում:

### 2.1 Օդի ջերմաստիճանի և մթնոլորտային տեղումների փոփոխության միտումները

Հիմք ընդունելով ՀՀ տարածքում գործող 47 օդերևութաբանական կայանների 1929-2016թթ. տվյալները՝ գնահատվել են գետնամերձ ջերմաստիճանի և 1935-2016թթ. գումարային տեղումների քանակի փոփոխությունները տարբեր ժամանակահատվածներով, որոնց արդյունքները բերված են Աղ. 1-ում: Արդյունքները ցույց են տալիս, որ վերջին տարիներին թե ջերմաստիճանի, թե տեղումների շեղումներն աճել են: 1929-1996թթ. միջին ջերմաստիճանը նորմայից բարձր էր 0.4°C-ով, իսկ 1929-2016թթ.՝ 1.23°C-ով (նորման՝ 5.5°C): Տեղումների դեպքում 1935-1996թթ. միջին մակարդակը 35 մմ-ով ցածր էր բազային ժամանակահատվածից (592 մմ), իսկ 1935-2016թթ. այն նորմայից ցածր էր 50 մմ-ով:


Աղյուսակ 1. Ջերմաստիճանի և տեղումների շեղումը Հայաստանում 1961-1990թթ. նորմայից

| Ժամանակահատված | Օդի ջերմաստիճան, °C | Ժամանակահատված | Տեղումների քանակ |
|----------------|---------------------|----------------|------------------|
| 1929-1996թթ.   | +0.4                | 1935-1996թթ.   | -35              |
| 1929-2007թթ.   | +0.85               | 1935-2007թթ.   | -41              |
| 1929-2012թթ.   | +1.03               | 1935-2012թթ.   | -59              |
| 1929-2016թթ.   | +1.23               | 1935-2016թթ.   | -50              |

Աղբյուր՝ Հայպետհիդրոմետ


Նկար 1-ից երևում է, որ 1961-1990թթ. տարեկան միջին ջերմաստիճանի շեղումը դրական էր 1994 թվականից ի վեր, բացառությամբ 2011թ.: Առավելագույն շեղումը եղել է 2010թ. (նորմայից 2.7°C բարձր):

Նկար 1. Տարեկան միջին ջերմաստիճանի շեղումը 1961-1990թթ. նորմայից



Տարվա տարբեր սեզոններին օդի ջերմաստիճանի փոփոխություններն ունեն տարբեր միտումներ: Այսպես, 1966-2016թթ. ժամանակահատվածում ամառային միջին ջերմաստիճանը բարձրացել է շուրջ 1.3°C-ով, ընդ որում վերջին հարյուրամյակում էքստրեմալ տաք ամառները Հայաստանում (Նկար 2) դիտվել են վերջին 20 տարիների ընթացքում: Ձմեռային ջերմաստիճանների շեղումներն ունեն լիովին այլ պատկեր, ձմռանը ջերմաստիճանի բարձրացման միտումը շատ աննշան է՝ 0.4°C: Շատ մեղմ ձմեռներ դիտվել են 1966թ. և 2011թ., իսկ ամենացուրտ ձմեռը՝ 1972թ.:

Նկար 2 . Տարեկան միջին տեղումների քանակի շեղումը 1961-1990թթ. նորմայից




## 2.2 Վտանգավոր օդերևութաբանական երևույթների միտումները

Վերջին տասնամյակներում, ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում կլիմայի փոփոխության հետևանքով բնական աղետների հաճախականությունը և ինտենսիվությունը զգալիորեն աճել են<sup>1</sup>: Մասնավորապես, աճել են հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթները (կարկուտ, ցրտահարություն, ուժեղ քամի, հորդառատ տեղումներ, վարարումներ, երաշտ, ջերմային ալիքներ), որոնք կարող են նպաստել այնպիսի բնական աղետների առաջացմանը (կամ ուժգնացմանը), ինչպիսիք են սողանքները, ձնահյուսները, սելավները, անտառային հրդեհները, վարակային հիվանդությունների տարածումը և այլն:

1975-2016թթ. ընթացքում վտանգավոր օդերևութաբանական երևույթների տարեկան քանակը (Նկար 3) Հայաստանում (կարկուտ 20 մմ և ավել տրամագծով, քամիներ 25 մ/վրկ և ավել արագությամբ, ցրտահարություն վեգետացիոն շրջանում, տեղումներ 30 մմ և ավելի մինչև 1 ժամվա ընթացքում) աճել է տարեկան շուրջ 40 դեպքով կամ 23.5%-ով 1975-2016թթ. միջին ցուցանիշի հետ համեմատած (միջինը՝ տարեկան 168 դեպք):

Նկար 3. 1975-2016թթ. ընթացքում Հայաստանում գրանցված վտանգավոր օդերևութաբանական երևույթների տարեկան քանակը



Երաշտները հանրապետության տարածքին բնորոշ առավել հաճախականությամբ կրկնվող հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթներից են, որոնք իրենց ինտենսիվությամբ, առաջացման ժամանակի առումով, տևողությամբ և տարածմամբ կարող են հասցնել զգալի վնաս տնտեսությանը: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Հայաստանի տարածքի ցածրադիր շրջաններում երաշտները դիտվում են գրեթե յուրաքանչյուր տարի, իսկ նախալեռնային շրջաններում երաշտների կրկնելիությունը կազմում է շուրջ 50%: Ըստ երաշտի ինդեքսների (ուժեղ և շատ ուժեղ երաշտների թիվը) 2000-2017թթ. ընթացքում 1975-2016թթ. միջինի (87) նկատմամբ ավելացել է 33 դեպքով կամ 38%-ով<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս [Third National Climate Change Communication of Armenia under UNFCCC, 2015.](#)

<sup>2</sup> Տե՛ս [Third National Climate Change Communication of Armenia, 2015.](#)

Ջերմային ալիքները սահմանվում են որպես առնվազն 5 անընդմեջ օրերի ժամանակահատված, երբ օրական առավելագույն ջերմաստիճանը գերազանցում է 1961-1990թթ. նորման՝ 5°C-ով: Ըստ գնահատականների 1966-1990թթ. Երևանում դիտվել է ջերմային ալիքների 5 դեպք, մինչդեռ 1991-2015թթ.՝ 41:

## 2.3 Էկոհամակարգերի կանխատեսվող փոփոխությունները

Հաշվի առնելով 1.5-2.0°C-ով տարեկան ջերմաստիճանի բարձրացումը և տարեկան 10%-ով տեղումների նվազումը, ակնկալվում է էկոհամակարգերում հետևյալ փոփոխությունները.

- Հողի խոնավությունը գարնանը կբարձրանա և ամռանը կնվազի համեմատած 1961-1990թթ. նորմայի հետ: Ամռանը հողի խոնավությունը կկրճատվի 10-30%-ով և խոնավության դեֆիցիտը կբարձրանա 25-50 մմ-ով, ինչը հանգեցնում է բույսերի խոնավության պարունակության կորուստների 15-20%-ով: Ակնկալվում է, որ այն զգալի ազդեցություն կունենա բերքատվության վրա:
- Ջյան ծածկույթը 2071-2100թթ. սահմաններում կնվազի 20-40%-ով 1961-1990թթ. նորմայի նկատմամբ:
- 2071-2100թթ. մակերևութային ջրերի հոսքը կնվազի 15-20%-ով 1961-1990թթ. նկատմամբ:
- Սևանա լճից արտահոսքը կնվազի և կկազմի 220-225 մլն. խոր. մ ներկայիս 252 մլն. խոր. մ նկատմամբ:

### 3. Ջերմոցային գազերի ազգային կադաստրներ

Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի (ԿՓՇԿ) 4-րդ հոդվածում նշված է, որ Կողմերի առաջնահերթ պարտավորությունն է՝ «ջերմոցային գազերի մարդածին արտանետումների և կլանումների ազգային կադաստրներ մշակելը, դրանք պարբերաբար թարմացնելը, հրապարակելը և Կողմերի կոնֆերանսին հասանելի դարձնելը»: Այս հոդվածը երկրներին պարտավորեցնում է մշակել ազգային կադաստրներ՝ օգտագործելով Կողմերի Կոնֆերանսի կողմից հաստատված համադրելի մեթոդաբանություններ:

#### 3.1. Կադաստրի ձևավորումը. անցած և ներկա գործընթացներ

Ջերմոցային գազերի (ՋԳ) առաջին ազգային կադաստրը Հայաստան Հանրապետությունը մշակեց 1996-98թթ. ընթացքում ՄԱԶԾ-ԳԷՖ «Հայաստան-Կլիմայի փոփոխության ուսումնասիրությունը երկրում» ծրագրի շրջանակում, բազային տարի ընդունելով 1990թ.<sup>1</sup>: Այդ կադաստրում ՋԳ արտանետումները և կլանումները գնահատվել են 1990թ. և 1994-1996թթ. համար, օգտագործելով ՋԳ ազգային կադաստրների կազման ԿՓՓՄԽ 1995թ. մեթոդաբանությունը: 1991-1993թթ. կադաստրում չընդգրկվեցին, քանի որ անցումային շրջանի դժվարությունների և տնտեսական ճգնաժամի պայմաններում ՋԳ կադաստրի կազմման համար տվյալները ներկայացուցչական չէին:

Այնուհետև 2004թ. մեկնարկեց ՋԳ կադաստրների որակի բարելավման հզորությունների ստեղծման ՄԱԶԾ-ԳԷՖ տարածաշրջանային ծրագիրը, որի շրջանակում ձեռնարկվեցին աշխատանքներ ուղղված Հայաստանի առաջին ազգային կադաստրի կատարելագործմանը՝ նախապատրաստվելով և կայունացնելով տեխնիկական ու ինստիտուցիոնալ հզորությունները: Որպես այդ տարածաշրջանային ծրագրի արդյունք բարելավվեց ՀՀ առաջին ազգային զեկույցի շրջանակում պատրաստված ՋԳ կադաստրի որակը, ստեղծվեց վերապատրաստված փորձագետների խումբ, ճշգրտվեցին արտանետման գործակիցները և վերանայվեց կիրառվող մեթոդաբանությունը: Ձևավորվել են նաև վերապատրաստված փորձագետների խումբ և ՋԳ արտանետումների ազգային ձեռնարկ:

Մինչ օրս մշակվել են հինգ ազգային ՋԳ կադաստրներ՝

- առաջին ազգային կադաստրը հրապարակվել է 1998թ.՝ բազային տարի ընդունելով 1990թ.,
- երկրորդ ազգային կադաստրը հրապարակվել է 2010թ., բազային տարին՝ 2000թ.,
- երրորդ ազգային կադաստրը հրապարակվել է 2014թ., բազային տարին՝ 2010թ.,
- չորրորդ ազգային կադաստրը 2011թ. և 2012թ. համար հրապարակվել է «Երկամյա առաջընթացի առաջին զեկույցի պատրաստում» ծրագրի շրջանակում,
- հինգրորդ ազգային կադաստրը 2013թ. և 2014թ. համար հրապարակվել է «Երկամյա առաջընթացի երկրորդ զեկույցի պատրաստում» ծրագրի շրջանակում,
- վեցերորդ ազգային կադաստրը 2015թ. և 2016թ. համար հրապարակվել է «Երկամյա առաջընթացի երկրորդ զեկույցի պատրաստում» ծրագրի շրջանակում:


<sup>1</sup> Տե՛ս <https://unfccc.int/resource/docs/natc/armnc1e.pdf>

ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը (ՇՄՆ)՝ որպես ՄԱԿ ԿՓՇԿ ազգային համակարգող, համակարգում է կոնվենցիայով նախատեսված Հայաստանի Հանրապետության ազգային և երկամյա առաջընթացի զեկույցների պատրաստման աշխատանքները:

2019թ. ՇՄՆ աշխատակազմում ստեղծվել է Կլիմայական փոփոխության քաղաքականության վարչություն, որը նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներից մեկն է: Այդ վարչության գործառույթների շրջանակներում է ազգային հաղորդագրությունների և երկամյա զեկույցների մշակման համակարգումը՝ ԿՓՇԿ իրականացմանը վերաբերող տեղեկատվության հետևողական, ամբողջական և ժամանակին ներկայացումն ապահովելու համար:

ՀՀ վարչապետի 2012թ. թիվ 955-Ա որոշմամբ ստեղծվել է ՄԱԿ կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի պահանջների ու դրույթների կատարման միջգերատեսչական համակարգման խորհուրդը: Խորհուրդը կազմված է 11 նախարարությունների, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի և Վիճակագրական կոմիտեի ներկայացուցիչներից, ինչպես նաև ՄԱԿ ԿՓՇԿ ազգային համակարգողից: Խորհրդի նախագահը Շրջակա միջավայրի նախարարն է: Խորհուրդը միջգերատեսչական մարմին է և միտված է ապահովելու միջսեկտորալ համակարգումը: Խորհրդի աշխատանքներին աջակցելու համար ստեղծվել է նաև աշխատանքային խումբ, որը բաղկացած է նախարարությունների և պետական գործակալությունների ներկայացուցիչներից, ինչպես նաև կլիմայի փոփոխության փորձագետներից և խորհրդատուներից: Աշխատանքային խմբում ներգրավված են Խորհրդի կազմում ընդգրկված բոլոր կազմակերպությունների ներկայացուցիչները, որոնք աջակցում են Հայաստանի, որպես Կողմ երկրի, հաշվետվողականության պարտավորությունների կատարմանը, ներառյալ ազգային կադաստրների մշակումը:

**Նկար 4 – Հայաստանում ՋԳ կադաստրի մշակման կառավարումը**



Կադաստրի մշակումը բաղկացած է հետևյալ հիմնական փուլերից՝

- մեթոդաբանության ընտրություն,
- տվյալների հավաքագրում,
- տվյալների մուտքագրում և արտանետումների հաշվարկ,
- զեկույցի պատրաստում:

Մեթոդաբանության ընտրությունը կախված է այն բանից, թե արդյոք տվյալ կատեգորիան Հայաստանում արտանետումների հիմնական աղբյուր է, թե ոչ: Հստակ հղում է տրվում բոլոր մեթոդաբանությունների ընտրության մեջ, ԿՓՓՄԽ 2006թ. գույքագրման նախապատրաստման ուղեցույցների առաջին, երկրորդ և երրորդ մակարդակի մեթոդաբանություններին: Կադաստրի կազմման ժամանակ առավելագույն գերակայություն են ստացել ուղղակի ջերմոցային ազդեցությամբ գազերի (CO<sub>2</sub>, CH<sub>4</sub> և N<sub>2</sub>O) արտանետումների գնահատումները հիմնական աղբյուրներից, ինչպես նաև ֆտորոգանական միացությունների (HFCs) արտանետումների գնահատումները:

Տվյալների հավաքագրումը բաղկացած է հետևյալ քայլերից՝

- պահանջների սահմանում հաշվարկման ընտրված մեթոդաբանության հիման վրա,
- ՇՄՆ պաշտոնական տվյալների հավաքագրում և ստացում,
- տվյալների ստուգումն ամբողջականության և ճշգրտության տեսանկյունից համապատասխան փորձագետների կողմից:

Տվյալների մուտքագրումը և արտանետումների հաշվարկը կատարվում համապատասխան վարչական ռեգիստրներում: Եթե տվյալների հավաքագրումը հատուկ կատարվում է գույքագրման կազմման նպատակով, տվյալների մուտքագրումն իրականացվում է գույքագրման թիմի անդամների կողմից: Արտանետումների հաշվարկները կատարվում են համապատասխան փորձագետների կողմից:

Զեկույցի պատրաստումը բաղկացած է հետևյալ քայլերից՝

- մշակված սեկտորային հաշվետվությունների հիման վրա կադաստրի հաշվետվության նախագծի կազմում և խմբագրում,
- հաշվետվության նախագծի քննարկում Միջգերատեսչական համակարգման խորհրդի աշխատանքային խմբի անդամների և ՇՄՆ համապատասխան մասնագետների հետ,
- հաշվետվության տեղադրում Կլիմայի փոփոխության տեղեկատվական կայքում՝ հանրային քննարկման համար,
- հաշվետվության նախագծի ներկայացում շահագրգիռ նախարարություններին և կազմակերպություններին,
- հաշվետվության նախագծի ներկայացում և համաձայնեցում Միջգերատեսչական համակարգման խորհրդի հետ,
- հաշվետվության թարգմանություն և ներկայացում ՄԱԿ ԿՓՇԿ,
- արխիվացում:

### 3.2. Կլիմայի փոփոխության վիճակագրության օրենսդրական հիմքերը Հայաստանում

Պաշտոնական վիճակագրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» (2018թ. մարտ) Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի որոշումներով և այլ իրավական ակտերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

«Պաշտոնական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական համակարգի ձևավորման, պաշտոնական վիճակագրության մշակման, արտադրման և տարածման, տարեկան և հնգամյա վիճակագրական ծրագրերի կազմման և ընդունման, վիճակագրական գաղտնիության, պաշտոնական վիճակագրության որակի ապահովման և համատարած հաշվառումների անցկացման հետ կապված հարաբերությունները:

Պաշտոնական վիճակագրության այլ արտադրողներ են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների այն կազմակերպական ստորաբաժանումները, որոնք բացառապես կամ հիմնականում զբաղվում են պաշտոնական վիճակագրության մշակմամբ, արտադրմամբ և տարածմամբ: Պաշտոնական վիճակագրության մեջ կիրառվող վարչական տվյալները հավաքվում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վարչական նպատակներով: Այդ տվյալների հավաքման իրավական հիմքերն այլ են, քան վիճակագրական օրենսդրությունը:

Հայաստանում ջերմոցային գազերի հաշվառման, գնահատման և տեղեկատվության փոխանակման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են՝

- 1993թ. Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված «Կլիմայի փոփոխության մասին» ՄԱԿ շրջանակային կոնվենցիայի հանձնառությունները, մասնավորապես, 4.1 և 12.1 հոդվածներն իրավական հիմքեր են ապահովում ՋԳ կադաստրի համար:
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի համաձայն պետական կառավարման մարմիններն ու իրավաբանական անձինք տնտեսական նպատակներով մթնոլորտային օդի և մթնոլորտային երևույթների արհեստական փոփոխություններ հետապնդող գործողությունները կարող են իրականացնել մթնոլորտային օդի պահպանության բնագավառում լիազոր մարմինների թույլտվությամբ և միայն այն պայմանով, որ դա չհանգեցնի եղանակի ու կլիմայի վրա անբարենպաստ ներգործության:
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի համաձայն մթնոլորտային օդ արտանետվող վնասակար նյութերի տեսակներն ու քանակը, ինչպես նաև մթնոլորտային օդի վիճակի վրա ֆիզիկական վնասակար ներգործությունների տեսակներն ու չափերը ենթակա են պետական հաշվառման, որն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

Ի հավելումն, հիմքեր են նաև ՄԱԿ ԿՓՇԿ շրջանակներում ստանձնած պարտավորություններին համապատասխանող հետևյալ օրենսգրքերը, օրենքները, հրամանագրերը, որոշումները և արձանագրությունները, մասնավորապես, ջերմոցային գազերի արտանետումների նվազեցմանը միտված՝



- ՀՀ Ջրային օրենսգիրք (2002թ.),
- ՀՀ Հողային օրենսգիրք (2001թ.),
- ՀՀ Անտառային օրենսգիրք (2005թ.),
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը (2014թ.),
- «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքը (2004թ.),
- «Մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների պետական հաշվառման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 1999թ. ապրիլի 22-ի N 259 որոշումը, որով սահմանվում է մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների և մթնոլորտի վրա վնասակար ֆիզիկական ներգործությունների պետական հաշվառման բովանդակությունը, նպատակներն ու խնդիրները և այդ բնագավառում լիազորված պետական կառավարման մարմինների գործառույթները,
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. հուլիսի 13-ին հաստատված «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիային կից Կիոտոյի արձանագրության մաքուր զարգացման մեխանիզմի շրջանակներում նախագծերի իրականացման մասին» N 974-Ն որոշումը,
- ՀՀ կառավարության 2016թ. դեկտեմբերի 8-ի N 49 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված մի շարք բնապահպանական միջազգային կոնվենցիաներից բխող՝ Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման միջոցառումների ցանկը», որի հավելվածում այլոց հետ մեկտեղ ներառված են ինչպես ՄԱԿ «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի, ներառյալ՝ Փարիզյան համաձայնագրի պահանջների կատարումն ապահովող 11 միջոցառումներ, դրանց կատարման ժամկետներով ու պատասխանատուներով, այնպես էլ դրա հետ խաչաձևվող՝ ՄԱԿ «Օզոնային շերտի պահպանման մասին» Վիեննայի կոնվենցիայով, ՄԱԿ «Կենսաբազմազանության մասին» կոնվենցիայով, «Կենսաբանական անվտանգության մասին» Կարթագենյան արձանագրությամբ, ՄԱԿ «Անապատացման դեմ պայքարի մասին» կոնվենցիայով և այլ կոնվենցիաներով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոցառումներ,
- «Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների արտանետումների սահմանային թույլատրելի մակարդակները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N965-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2017թ. հուլիսի 20-ի N 860-Ն որոշումը,
- ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 18-ի «ՀՀ էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ազգային ծրագիրը հաստատելու մասին» N 2 արձանագրային որոշումը,
- «ՀՀ հարկային օրենսգիրք» (2016թ.), որպես արտանետումների նվազեցմանն ուղղված տնտեսական մեխանիզմների կիրառման համար հիմք հանդիսացող իրավական գործիք:

Բացի այդ, ՇՄՆ կողմից մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել «Էկոլոգիական քաղաքականության մասին» օրենքի նախագիծը, որի ընդունումը հնարավորություն կտա

բարելավել բնապահպանական հաշվետվողականությունը միջազգայնորեն ընդունված հիմնական ցուցանիշների հիման վրա (ներառյալ կլիմայի փոփոխությունը), ժամանակին բացահայտել և կանխատեսել բնական և մարդածին ազդեցությունների հետևանքով շրջակա միջավայրի փոփոխությունները, ապահովել շրջակա միջավայրի գնահատման համար համապարփակ, հուսալի, համադրելի և մատչելի տեղեկատվություն:

## 4. Կլիմայի փոփոխության վիճակագրության զարգացման ճանապարհային քարտեզը

Այս բաժնում ներկայացվում է Հայաստանի կլիմայի փոփոխության վիճակագրության զարգացման ճանապարհային քարտեզը: Ընդհանուր առմամբ ճանապարհային քարտեզը մշակվել է հաշվի առնելով 2014թ. Եվրոպական վիճակագիրների համաժողովի առաջարկությունները կլիմայի փոփոխության վիճակագրության վերաբերյալ (ԵՎՀ առաջարկություններ)<sup>1</sup>, կլիմայի փոփոխության վերաբերյալ միջազգային կոնվենցիաների և համաձայնագրերի պահանջները, որտեղ Հայաստանը ստորագրող կողմ է, ներառյալ Փարիզյան համաձայնագիրը: Նրանց կողմից երաշխավորված «Կլիմայի փոփոխության վիճակագրության զարգացման ճանապարհային քարտեզներ» փաստաթուղթն ու դրանց համալրող աղյուսակներն ուղեցույց են ինչպես կլիմայի փոփոխության ճանապարհային քարտեզի փաստաթղթի հետ կապված վիճակագրական գերակայությունների որոշման համար, այնպես էլ դրանց մշակման ուղղությամբ (երկուսն էլ մշակվել են Ժնևում ՄԱԿ ԵՏՀ վիճակագրության ստորաբաժանման կողմից)<sup>2</sup>:

ԵՎՀ առաջարկությունների համաձայն ճանապարհային քարտեզի ուշադրության առանցքում են այն առաջնահերթությունները, որոնք`

- 1) անմիջականորեն կապված են Հայաստանի ՋԳ արտանետումների գույքագրման համար անհրաժեշտ վիճակագրության հետ,
- 2) կապված են կլիմայի փոփոխության վերլուծության համար անհրաժեշտ այլ վիճակագրության հետ,
- 3) կապված են կլիմայի փոփոխության վիճակագրության համար անհրաժեշտ վիճակագրական «ենթակառուցվածքների» (օրինակ, վիճակագրական մեթոդներ և ստանդարտներ) հետ:

Հաշվի առնելով նաև ԵՎՀ առաջարկությունները, ճանապարհային քարտեզը չի վերաբերում կլիմայի և եղանակի հետ անմիջականորեն կապված գիտական տվյալներին, օրինակ, ջերմաստիճանի և տեղումների մասին տվյալներ: Փաստացի այն կենտրոնանում է բնապահպանական, սոցիալական և տնտեսական տվյալների վրա, որոնք չափում են կլիմայի փոփոխության մարդածին պատճառները, կլիմայի փոփոխության հետևանքները մարդկային ու

<sup>1</sup> Տե՛ս [http://www.unece.org/fileadmin/DAM/stats/publications/2014/CES\\_CC\\_Recommendations.pdf](http://www.unece.org/fileadmin/DAM/stats/publications/2014/CES_CC_Recommendations.pdf)

<sup>2</sup> Տե՛ս

[http://www.unece.org/fileadmin/DAM/stats/documents/ece/ces/2017/Road\\_maps\\_for\\_climate\\_change\\_statistics.pdf](http://www.unece.org/fileadmin/DAM/stats/documents/ece/ces/2017/Road_maps_for_climate_change_statistics.pdf) and [http://www.unece.org/fileadmin/DAM/stats/documents/ece/ces/2017/Tool\\_to\\_prioritize\\_recommendations\\_on\\_climate\\_change.xlsx](http://www.unece.org/fileadmin/DAM/stats/documents/ece/ces/2017/Tool_to_prioritize_recommendations_on_climate_change.xlsx)

բնական համակարգերի վրա և մարդկության ջանքերը խուսափելու և/կամ հարմարվելու կլիմայի փոփոխության հետևանքներին: Ճանապարհային քարտեզում ներառվել են վիճակագրության հետևյալ ոլորտները.

- ջերմոցային գազերի արտանետումների վիճակագրություն,
- ջերմոցային գազերի արտանետումների համար աղբյուր հանդիսացող մարդկային գործունեությանն առնչվող վիճակագրություն (օր.՝ արդյունաբերություն),
- մարդկային և բնական համակարգերի վրա կլիմայի փոփոխության ազդեցությունը գնահատող վիճակագրություն (օր.՝ աղետների պատճառած վնասը ենթակառուցվածքներին),
- կլիմայի փոփոխության ազդեցության մեղմմանն ուղղված վիճակագրություն (օր.՝ արևային, քամու, երկրաջերմային էներգիայի կայանների տեղադրում),
- կլիմայի փոփոխության ազդեցությանը հարմարվելուն ուղղված վիճակագրություն (օր.՝ բնակարանային օդափոխման համակարգի տեղադրում):

Ճանապարհային քարտեզի մշակման գործում Վիճակագրական կոմիտեի հիմնական գործառնություններն են.

- օժանդակել Հայաստանի ազգային ՋԳ գույքագրման կազմողներին՝ գնահատելով պաշտոնական վիճակագրության օգտակարությունը գույքագրման համար,
- բարելավել ՋԳ գույքագրման մեջ օգտագործվող վիճակագրության որակը, օրինակ, գույքագրման վերանայման հաշվետվությունների առաջարկությունների հիման վրա,
- վերլուծել Կիոտոյի արձանագրության և կլիմայի փոփոխության վերաբերյալ այլ գլոբալ կամ տարածաշրջանային համաձայնագրերի հետ կապված վիճակագրական կարիքները,
- ապահովել նոր տվյալներ կլիմայի փոփոխության վերլուծաբանների կարիքների բավարարման համար:

Հետագայում Վիճակագրական կոմիտեն կարևորում է նոր գիտելիքներ և փորձառություն ձեռք բերելու, վերապատրաստման, աշխատանքի ընդունման և, առաջին հերթին, տեղեկատվական այլ աղբյուրների և փորձագետների հետ համագործակցելու անհրաժեշտությունը: Վիճակագրական կոմիտեն նաև ընդունում է, որ երկարաժամկետ հեռանկարում կազմակերպական փոփոխությունների կարիք կա, որոնք կաջակցեն կլիմայի փոփոխության վիճակագրության զարգացմանն ամբողջ վիճակագրական համակարգում:

Կլիմայի փոփոխության հետ կապված վիճակագրության զարգացման Հայաստանի առաջնահերթությունները ներկայացված են ստորև աղյուսակներում: Առաջնահերթությունները կազմված են ԵՎՀ սահմանած 9 հիմնական առաջարկությունների շուրջ.

- բարելավել ջերմոցային գազերի արտանետումների ազգային գույքագրման վիճակագրությունը,
- ազգային վիճակագրական գրասենյակները, հատկապես ՄԱԿ ԿՓՇԿ Հավելված I-ի Կողմերը, պետք է ակտիվություն ցուցաբերեն ջերմոցային գազերի գույքագրումների համար պատասխանատու գերատեսչությունների հետ համագործակցելու հարցում,
- միջազգային վիճակագրական համայնքն ակտիվ դերակատարություն պետք է ունենա գլոբալ ՋԳ գույքագրման համակարգին աջակցության հարցում,

- ազգային վիճակագրական գրասենյակները պետք է բարելավեն պաշտոնական վիճակագրության աջակցությունը կլիմայի փոփոխության վերլուծությանը՝ դյուրացնելով, այլոց շարքում, հասանելիությունն առկա վիճակագրության նկատմամբ,
- բարելավել առկա բնապահպանական, սոցիալական, տնտեսական վիճակագրության կիրառելիությունը կլիմայի փոփոխության վերլուծության համար,
